## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 սեպտեմբերի 2021 թվականի N 554-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. 2021 թվականի հոկտեմբերի 27-ին անցկացնել մրցույթ համայքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնի համար՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝3.1-6), ժամը՝ 11:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 22
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2021 թվականի N 555-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Գայանե Բարսեղյան»-ի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի N74 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա, 2-րդ փողոց, թիվ 20/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Գայանե Բարսեղյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 22
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
( 0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2021 թվականի N 556-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Վլադիմիր Հապետնակի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 1773258, տրված՝ 31 . 05 . 2005-ին) Լոռու մարզ, Մեդովկա համայնք, գ . Կրուգլայա-Շիշկա, 3-րդ փողոց, 10 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ . Կրուգլայա - Շիշկա, 3-րդ փողոց, թիվ 10 բնակելի տուն ( փաստային դասիչ՝ 2111) հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 22
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2021 թվականի N 557-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով նախատեսված Վարդիթեր Գուրգենի Ավդալյանի ( ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AU0352663,տրված՝ 13 .07.2021-ին,007-ի կողմից) կողմից վարչական իրավախատում կատարելու հիմքով 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կազմած 1/11 արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 219.1-րդ հոդվածի 3-րդ պարբերության, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերությունների, 37-րդ, 281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով , 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վարդիթեր Գուրգենի Ավդալյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ Հյաաստանի Հանրապետության վարչական իրավախատումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 100 . 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

4. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 24
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2021 թվականի N 558-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱԶԱՏ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ազատ Ռաֆայելյան»-ի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N75 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 204 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ազատ Ռաֆայելյան»-ի հայտը բավարարել և նրան տալ մինչև 2021 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 24
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2021 թվականի N 559-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳՅՈԶԱԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Գյոզալ Բաղդասարյան»-ի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N76 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Էրեբունի 6 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր »Գյոզալ Բաղդասարյանն»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2021 թվականի N 560-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Սարիբեկ Հովհաննեսի Ավետիսյանին, Աննա Անաստասի Ավետիսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքին՝ (առք ու վաճառքի պայմանագիր՝ 22.09.2021-ի, նոտարական ակտի կոդ՝ 595-20210922-2-5396716) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաք, Լենինի փողոց, թիվ 113 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Կ.Դեմիրճյան փողոց, թիվ 113 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2101) հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 24
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

25 սեպտեմբերի 2021 թվականի N 561-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԶՈՅԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ ՌԱՓԱԵԼԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Զոյա Մալխասյան Ռափաելի»-ի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի N77 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Խանջյան փողոց, թաղամաս 5, թիվ 3Ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Զոյա Մալխասյան Ռափաելի» հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 25
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2021 թվականի N 562-Ա

### ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/100» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. օգոստոսի 31-ի N4 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Լեռնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/100» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 25
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2021 թվականի N 563-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով « ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/103» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 16-ի N4 արձանագրության պրդյունքները, հիմք ընդունելով, որ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի լուսավորության ցանցի ընդլայնման և նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով արդիականացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/103» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 25
ք.Տաշիր